# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2024/34 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 7 | Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ | Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ | Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ | Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՏԵՐԱՆ» ՄԵԴԱԼ Համապատասխան տուփով և վկայականով Տեխնիկական բնութագիր՝ տես կից ֆայլը Մինչև մատակարարումը 1 հատ նմուշ ներկայացնել պատվիրատուին՝ համաձայնեցման: . «ՀՀ պետական պահպանության ծառայության վետերան» մեդալը (այսուհետ՝ մեդալ) բաղկացած է երկու մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված խաչաձև մեդալից: Կախիչը պատրաստվում է թեթև մետաղից և ունի հնգանիստ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | բազմանկյան ձև, որը պաստառապատված է 24մմ լայնություն ունեցող նկարին համապատասխան գույներ ունեցող ժապավենով: Կախիչի վերին մասի երկարությունը կենտրոնից մինչև ներքին գագաթը 50մմ է: Կախիչը հակառակ երեսում ունի ասեղային ամրակ՝ պարգևատրվածի հագուստին ամրացնելու համար: Մեդալը ոսկեզօծ է, պատրաստված պղնձի հատուկ համաձուլվածքից և ունի 50մմ արտագծած տրամագիծ: Մեդալի դիմերեսին պատկերված է քառաթև մուգ կապույտ գույնի էմալով պատված խաչ: Խաչի թևերի միջև ռոմբաձև անկյուններով պատկերներ են, իսկ կենտրոնում՝ սկավառակաձև կլոր պատկերի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության արծաթագույն զինանշանը՝ պատված եռագույն էմալներով: Զինանշանի վերին մասում մեդալի կորին զուգահեռ ուռուցիկ տառերով գրված է՝ «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ», իսկ ներքևի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մասում՝ ժապավենի մեջ «ՎԵՏԵՐԱՆ» գրվածքները։ Մեդալը դարձերեսի կողմում առկա է «STATE PROTECTION SERVICE» գրվածքը և համապատասխան շրջանակ՝ հերթական համարը դրվագելու համար։ Մեդալի միանմանությունն ապահովելու համար այն պատրաստված է հատուկ տեխնոլոգիայով և դրոշմման եղանակով։ Մեդալի տուփ /մեծ/։ (160x110x35)մմ ձևաչափի, ստվարաթղթից, կապույտ գույնի բումվինիլից պատված, եզրերին ոսկեգույն նախշերով, ներսում վերևի հատվածը սպիտակ մետաքսապատ, ներքևի մասում՝ կապույտ թավշապատ մահուդից։ Մեդալների և շքանշանների համար նախատեսված է հատուկ ամրակներ։ ՀՀ ՊՊԾ տարբերանշանով։ Նմուշը համաձայնեցնել պատվիրատուի հետ։ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԳԳԾ-ԷԱՃԱՊՁԲ-2024/34 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 7 | | | | | |